

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/16

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Արսեն Տարախչյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Արսեն Տարախչյանը հայտնում է, որ որպես անհատ ձեռնարկատեր պետական ռեգիստրով հաշվառումից հանվել է 15.08.2013թ. և կրկին հաշվառվել է 20.02.2018թ.: Սակայն այդ օրվանից չի կարողանում ներկայացնել հայտարարություն շրջանառության հարկ վճարող համարվելու համար: Փետրվար-մարտ ամիսներին բազմիցս դիմել է ՀՎՍՎ թիվ 6 բաժին, որտեղ պատճառաբանել են, որ խնդիրը ծրագրային է: Նրանք տեղյակ են պահել համապատասխան բաժնին և իրենց ներքին բազայում այդ ինֆորմացիան առկա է, սակայն մինչ օրս այս հարցը չի լուծվել: Անգամ հաշվետվություն ուղարկելու օրն է անցել և Ա/Ձ Արսեն Տարախչյանը չի կարողացել շրջանառության հարկի հաշվարկը ուղարկել:

Նշված խնդրի լուծման համար Ա/Ձ Արսեն Տարախչյանը զանգահարել է 060 54 44 44 հեռախոսահամարին +010 48 11 49 հեռախոսահամարից, որտեղից ուղղորդել են գրավոր նամակ ուղարկել online_support@taxservice.am էլ. հասցեով: Այնուհետև Ա/Ձ Արսեն Տարախչյանն ուղարկել է նշված հասցեով իր նամակը, որտեղից էլ ուղղորդել են նամակը ուղարկել secretariat@petekamutner.am էլ. հասցեով:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Արսեն Տարախչյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառումից հանվել է 15.08.2013թ. և կրկին հաշվառվել է 20.02.2018թ.:

Որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելուց հետո բազմիցս փորձել է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ինչն իրեն չի հաջողվել:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը

բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնիսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Ա/Ձ Արսեն Տարախչյանը սահմանված կարգով և ժամկետներում փորձել է ներկայացնել է 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը (նիստի ժամանակ ներկայացվեցին նշված փաստը հիմնավորող ապացույցներ, որոնք կցվել են գործին), սակայն առաջացել են տեխնիկական խնդիրներ և փաստացի չի հաջողվել էլեկտրոնային եղանակով այն ուղարկել, որպիսի ծրագրային խափանումների մասին տեղեկացվել են նաև հարկ վճարողների սպասարկման համապատասխան բաժնի աշխատակիցները:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն ՀՀ դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն ՀՀ դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն ՀՀ դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն ՀՀ դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է հարկ վճարողի՝ շրջանառության հարկ վճարող չհամարվելու դեպքերը:

Տվյալ դեպքում, ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների շտեմարանում բացակայում է Ա/Ձ Արսեն Տարախչյանն Օրենսգրքով նախատեսված՝ շրջանառության հարկ վճարող չհամարվելու վերը նշված հոդվածով սահմանված դեպքերից որևէ մեկը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Արսեն Տարախչյանը Օրենսգրքով սահմանված ժամկետում փորձել է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող

համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն իրենից անկախ հանգամանքներում այն չի հաջողվել ներկայացնել, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Արսեն Տարախյանին կրկին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Արսեն Տարախյան դիմում-բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Արսեն Տարախյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ

